Ջուր. 4

VEOLIA Ջուր

**Հավելված №1**
*Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N379Ն որոշման*

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ (ՄԱՏԱԿԱՐԱՐ- ԲՆԱԿԻՉ ԲԱԺԱՆՈՐԴ)

**Հաշվառման քարտ N** Ջ/Կ ________________________

գ. Երասխ ________________________
(պայմանագրի կնքման վայրը)

«____»__________20___ թ.

Մատակարարը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Ք.Երևան,Աբովյան 66ա

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս Գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանի, որը գործում է

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Ընկերության կանոնադրության և ԼՋ N 0001 Լիցենզիայի հիման վրա, մի կողմից,

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և բաժանորդը՝ Միքա Աշոտի Փելիպչյան,

(անունը, հայրանունը, ազգանունը)

[illegible],

(բնակության վայրը, միացման կետի հասցեն)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

2) **կանոններ՝** հանձնաժողովի կողմից հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.

3) **առևտրային հաշվառքի սարք՝** պետական չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված ու կապարակնքված խմելու ջրի քանակի հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են սույն պայմանագրում.

4) **առևտրային հաշվառքի սարքի խախտում՝** պետական չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խափանումը կամ վնասումը, կամ կապարակնիքի բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ սարքի բնականոն աշխատանքի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.

5) **հաշվարկային ամիս՝** ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է բաժանորդին մատուցել

(խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման)

ծառայություններ (այսուհետ՝ ծառայություններ), իսկ բաժանորդը՝ վճարել դրանց դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

4. Բաժանորդը պարտավոր է՝

1) վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում,

2) թույլ չտալ առևտրային հաշվառքի սարքի խախտում,

3) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայության համատեղ ստուգման նպատակով,

4) առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ մատակարարված խմելու ջրի որակի վերաբերյալ կասկած առաջանալու պարագայում առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել մատակարարին,

5) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ մատակարարը տեղեկանք է տալիս բաժանորդին:

5. Բաժանորդն իրավունք ունի՝

1) մատակարարի կողմից նախորդ հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի մասին կանոններով սահմանված կարգով և ժամկետում չծանուցման դեպքում մինչև ծանուցվելը կանոններով սահմանված կարգով չվճարել մատուցված ծառայությունների դիմաց,

2) պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ դրա ապահավաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

3) կապարակնքել առևտրային հաշվառքի սարքը,



4) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

6. Մատակարարը պարտավոր է՝

1) ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը՝ ծառայություններին ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխան,

2) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի տեղակայումը և կապարակնքումը՝ կանոններով սահմանված կարգով,

3) առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումը, ստուգաչափումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

4) առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման դեպքում իր հաշվին տեղակայել նոր առևտրային հաշվառքի սարք՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

5) կանոններով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխանել բաժանորդի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,

6) բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերականգնումը և այդ մասին բաժանորդին իրազեկումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

7) կազմել և բաժանորդին ներկայացնել մատուցված ծառայությունների քանակի և դրա դիմաց բաժանորդի կողմից վճարման ենթակա գումարի վերաբերյալ տեղեկատվություն՝ կանոններով սահմանված կարգով,

8) մատուցած ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի վերաբերյալ բաժանորդի առարկության դեպքում վերջինիս պահանջով կանոններով սահմանված ժամկետում պարզաբանել մատուցված ծառայությունների քանակի և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում կանոններով սահմանված կարգով կատարել ուղղում, չդադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը, եթե վերջինս վճարել է ծառայությունների՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իրեն մատուցված ծառայությունների վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին,

9) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:

7. Մատակարարն իրավունք ունի՝

1) բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք մուտք գործելով, բաժանորդի հետ համատեղ ստուգել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայությունը,

2) միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 4-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

## 4. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Բաժանորդին հաշվարկային ամսում մատակարարված խմելու ջրի քանակը որոշվում է սույն պայմանագրի հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի գրանցած ցուցմունքներով, իսկ դրա բացակայության դեպքում՝ կանոնների համաձայն:

9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

10. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) դեպքում հաշվարկման և վերահաշվարկման ժամանակ հեռացվող կեղտաջրերի քանակն ընդունվում է հավասար բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակին:

11. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

**12.** Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարաձայնությունները լուծվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված խմելու ջրի արժեքի՝ բաժանորդի կողմից ողջամտորեն հիմնավորված չվիճարկվող մասի վճարման դեպքում բաժանորդին ծառայությունների մատուցումը չի դադարեցվում մինչև վեճի վերջնական լուծումը:

## 5. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին մատուցված ծառայությունների արժեքը որոշվում է հանձնաժողովի սահմանած սակագների և մատակարարված ծառայությունների քանակի արտադրյալով:

14. Հանձնաժողովի սահմանած սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:

15. Մատակարարը իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում տեղադրում է հաշվարկային ամսում բաժանորդին մատուցված ծառայությունների քանակի և արժեքի մասին տեղեկատվություն՝ կանոններով սահմանված ժամկետում:

16. Բաժանորդը հաշվարկային ամսվա համար մատուցված ծառայությունների դիմաց վճարում է սույն պայմանագրի 15-րդ կետում նշված տեղեկատվության հրապարակումից հետո՝ կանոններով սահմանված ժամկետում:

17. Կանոններով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում մատակարարը կանոններով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է բաժանորդին՝ վճարման, իսկ վճարումը չկատարելու դեպքում՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից կանոններով սահմանված ժամկետում բաժանորդը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը: Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝



հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո մատակարարը պարտավոր է վերսկսել ծառայությունների մատուցումը: Ծառայությունների մատուցումը վերսկսելուց առաջ մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:

18. Մատակարարն իրավունք չունի մատակարարվող ծառայությունների համար բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:

19. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկած խմելու ջրի արժեքը և տույժերը (հաշվարկված լինելու դեպքում) վճարվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, Կանոններով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

21. Մատակարարը կանոններով սահմանված դեպքերում բաժանորդին վճարում է տուժանք՝ կանոններով սահմանված չափով և կարգով:

22. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

23. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և, միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, հիաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

24. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

## 8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

25. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

26. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

27. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

28. Հանձնաժողովի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-բնակիչ բաժանորդ) նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ, կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

29. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

30. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

31. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, եթե առանձին դեպքերի համար կանոններով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

32. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց ծանուցման նոր հասցեի վերաբերյալ:

33. Սույն պայմանագրի անբաժանելի մաս է կազմում առանձին հաշվարկի սարքի վերաբերյալ հավելվածը:



Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@vjur.am
Հ/հ 1500351562015
Բանկ «[illegible]» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա LՋ N 0001
Գլխավոր տնօրեն
[illegible]յան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կատարող՝ __________
(Ստորագրություն)
__________
(Ստորաբաժանման անվանումը)
__________
(պաշտոնը և անուն, ազգանունը)

Բաժանորդ՝
__________
(անուն, ազգանուն)
Բնակության վայրը՝
__________
Ծանուցման հասցեն՝
__________
Էլ. փոստ __________
Հեռախոս քաղ. __________
Հեռախոս բջջ. __________

Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ՝ BA 3527749
13.01.2021. 001
__________
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ (առկայության դեպքում)

**Հավելված**
Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման
(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման
(մատակարար - բնակիչ բաժանորդ) պայմանագրի

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**1. Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալները**

| № | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Առևտրային հաշվառքի սարքի տրամագիծը | Տեղադրման վայրը | Տեղադրման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | 22171619 | 1550 | ս/հ | |
| 2. | | | | | | |
| 3. | | | | | | |
| 4. | | | | | | |

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@vjur.am
Հ/Հ 1150035562015
Բանկ «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա ԼՁ N 0001
Գլխավոր տնօրեն
_______ Ս. Շահինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ.

Կատարող՝ _______________
(Ստորագրություն)
_______________
(Ստորաբաժանման անվանումը)
_______________
(պաշտոնը և անուն, ազգանունը)

Բաժանորդ՝
_______________
( անուն, ազգանուն)
Բնակության վայրը՝
_______________
Ծանուցման հասցեն՝
_______________
Էլ. փոստ _______________
Հեռախոս քաղ. _______________
Հեռախոս բջջ. _______________

Անձը հաստատող փաստաթղթի
տվյալներ՝ BA 3527749
13.01.2021 011
_______________
_______________
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ (առկայության դեպքում)

18

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2007 թվականի հուլիսի 6-ի N298Ն որոշմամբ

## Էլեկտրական էներգիայի մատակարարման
## (Մատակարար-Սպառող (բնակիչ))

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N** 0475984

Ք. ԵՐԵՎԱՆ
(կնքման վայրը)

«27» 11 2013 թ.

մատակարարը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»ՓԲԸ
(ընկերության անվանումը)

«ՀՅՈՒՍԻՍ»
(մասնաճյուղի անվանումը)

ի դեմս ՏՆՕՐԵՆ Կ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
(անունը, ազգանունը, պաշտոնը)

«ՀՅՈՒՍԻՍ» մասնաճյուղ Հաճախորդային բաժին

որը գործում է ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և սպառողը՝
(անունը, հայրանունը, ազգանունը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրի համաձայն մատակարարը պարտավորվում է սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ սպառողը պարտավորվում է վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

### 2. Կողմերի պարտականությունները

2.1 **Կողմերը պարտավոր են** ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով» (այսուհետ՝ ԷՄՕԿ) և սույն պայմանագրով:

2.2 **Մատակարարը պարտավոր է.**

1) մատակարարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի №1925Ն որոշմամբ հաստատված էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված որակի էլեկտրական էներգիա, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի լարման կայուն շեղման երկարատև (30 վայրկյանից ավելի) թույլատրելի տիրույթը՝ ± 5%, առավելագույն թույլատրելի տիրույթը՝ ± 10%.
2) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա ընթացքում սպառողների կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին.
3) շուրջօրյա գործող 8 00000 175 հեռախոսահամարով դիմելու դեպքում սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս դիմում-բողոքի և հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրաէներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, մատակարարի և սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.
4) ԷՄՕԿ-ի 75-րդ կետով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ.
5) վճարման փաստաթղթում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու կամ սպառողից այդ մասին դիմում ստանալու դեպքում՝ 5, իսկ լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտության դեպքում՝ 15 սպասարկման օրվա (տարվա բոլոր օրերը, բացառությամբ կիրակի օրերի) ընթացքում ստուգել իր գրառումները և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել սպառողին, սխալը հաստատվելու դեպքում ուղղումը հաշվի առնել ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման հաշվում.
6) էլեկտրամատակարարման պլանային ընդհատման և վերականգնման ժամկետների մասին սպառողին տեղեկացնել ընդհատմանը նախորդող օրվա ընթացքում՝ ԷՄՕԿ-ի 24-րդ կետով սահմանված կարգով.
7) սպառողի դիմումն ստանալուց ոչ ուշ, քան 10 սպասարկման օրվա ընթացքում ստուգել սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և նրան ներկայացնել դրա աշխատանքի ճշտության մասին գրավոր եզրակացություն.
8) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ի 64-րդ կետով նախատեսված դեպքի.
9) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգումն իր նախաձեռնությամբ իրականացնելու դեպքում այդ մասին առնվազն 1 օր առաջ գրավոր զգուշացնել սպառողին և նրա հետ պայմանավորվել ստուգման ժամկետների մասին.

10) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել սպառողի առևտրային հաշվառքի սարքերը և փոխարինումից հետո համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում (հավելված).
11) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը:

**2.3 Սպառողը պարտավոր է.**

1) վճարել յուրաքանչյուր ամսվա ընթացքում իր սպառած էլեկտրական էներգիայի դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով.
2) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը:

### 3. Սպառված էլեկտրաէներգիայի քանակության և արժեքի հաշվարկը, դրա վճարման կարգը

3.1 Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:
3.2 Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանված ժամկետից:
3.3 Սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 3.4 կետով նախատեսված դեպքի, որոշվում է սպառողի առևտրային հաշվիչի՝ տվյալ հաշվարկային ամսվա և տվյալ հաշվարկային ամսվան նախորդող ամսվա գրանցած ցուցմունքների տարբերությամբ, իսկ չափիչ տրանսֆորմատորների առկայության դեպքում՝ այդ տարբերությունը բազմապատկելով նաև դրանց տրանսֆորմացիայի գործակցով:
3.4 Եթե առևտրային հաշվիչն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրաէներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրաէներգիայի այդ քանակը:
3.5 Առևտրային հաշվառքի սարքի խափանման (էլեկտրաէներգիայի քանակության սխալ գրանցում) դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի 12-րդ գլխի պահանջների:
3.6 Առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին և հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում:
3.7 Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրաէներգիայի քանակության արտադրյալով:
3.8 Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի արժեքը պարտավոր է վճարել իր կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին համապատասխան տեղեկատվությունը սույն պայմանագրի 2.2 կետի 2) ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղադրվելուց հետո 7 օրվա ընթացքում:

### 4. Սպառողի էլեկտրամատակարարման ընդհատման, դադարեցման և վերականգնման պայմանները

4.1 Մատակարարի կողմից պլանային-նախազգուշական աշխատանքներ կատարելու նպատակով սպառողի հոսանքազրկումը (պլանային ընդհատում) թույլատրվում է ԷՄՕԿ-ի 27-րդ կետով սահմանված դեպքում և կարգով:
4.2 Մատակարարը սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ի 27-րդ կետով սահմանված ժամերին:
4.3 Մատակարարը պարտավոր է դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝
   1) սպառողի գրավոր պահանջով և առաջարկած ժամկետում.
   2) մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունն ապահովելու համար՝ Հայաստանի Հանրապետության օրենքով և տեխնիկական կանոնակարգերով սահմանված դեպքերում:
4.4 Մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝
   1) սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սույն պայմանագրի 3.8 կետով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում՝ առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ սպառողին հասու այլ ձևերով (շքամուտքերում, փոստային բաժանմունքներում հայտարարություն փակցնելով և այլն) զգուշացնելուց հետո: Զգուշացումը հեռուստատեսությամբ պետք է կատարվի ԷՄՕԿ-ի 48-րդ կետով սահմանված կարգով.
   2) պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում՝ ապահովելով սույն կետի 1) ենթակետով սահմանված ընթացակարգը.
   3) եթե սպառողը էլեկտրաէներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առանց առևտրային հաշվառքի սարքի, կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով.
   4) առևտրային հաշվառքի վերականգնման կամ առևտրային հաշվառքի սարքի փոխարինման նպատակով՝ մինչև 1 ժամ:
4.5 Պարտքի առկայության դեպքում մատակարարը կարող է չդադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը, եթե սպառողը ներկայացրել է մատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմվել է պարտքի մարման ժամանակացույց:
4.6 Մատակարարը սպառողի էլեկտրամատակարարման չպլանավորված (արտապլանային) ընդհատումը պարտավոր է վերականգնել ԷՄՕԿ-ի 28-րդ կետով սահմանված ժամկետներում:
4.7 Եթե էլեկտրամատակարարման ընդհատումը տեղի է ունեցել առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման արդյունքում, ապա մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել ԷՄՕԿ-ի 29-րդ կետով սահմանված ժամկետներում:
4.8 Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո մատակարարը սպասարկման օրերին պարտավոր է այն վերականգնել ոչ ուշ, քան՝
   1) նույն օրը՝ մինչև ժամը 17:30-ը, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել մինչև տվյալ օրվա ժամը 14:00-ն, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություններ, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը.

2) հաջորդ օրը՝ մինչև ժամը 13:00-ն, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել տվյալ օրվա ժամը 14:00-ից մինչև 17:30-ը, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություններ, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը:

**5. Կողմերի պատասխանատվությունը**

5.1 Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ի 16-րդ գլխով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

**6. Ֆորս մաժորային իրավիճակներ**

6.1 Մատակարարը սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն չի կրում, եթե դա հետևանք է արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են մատակարարի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (ինչպես օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը), սաբոտաժային գործողությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, հասարակական անկարգությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են մատակարարի գործունեությունը կամ հանգեցնում են նրա ստանձնած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ անկախ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

**7. Այլ պայմաններ**

7.1 Բազմաբնակարան շենքերը սնող 0.4 կՎ լարման մալուխային կամ օդային (էլեկտրահաղորդման) գծերի, էլեկտրաէներգիայի բաշխման սարքավորումների, ինչպես նաև 0.22 կՎ լարման հաղորդալարերի՝ մինչև բնակարանը, իսկ առանձնատան (ամառանոցի) դեպքում՝ մինչև կանգնակը (պատասխանատվության սահմանազատման կետեր), պահպանման, սպասարկման, ինչպես նաև շահագործման անվտանգության ապահովման համար պատասխանատվությունը կրում է մատակարարը:

7.2 Սպառողն իրավունք ունի կնքել իր առևտրային հաշվառքի սարքը, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ի 65-րդ կետով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների:

7.3 Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում այդ մասին սույն պայմանագրի հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

**8. Վեճերի լուծումը**

8.1 Սույն պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի դիմելու դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

8.2 Սույն պայմանագրի 8.1 կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

**9. Պայմանագրի գործողությունը և լուծումը**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:
9.2 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:
9.3 Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-Սպառող (բնակիչ)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում: Հանձնաժողովի սահմանած ժամկետում էլեկտրական էներգիայի մատակարարման նոր պայմանագիր չկնքելու կամ գործող պայմանագրում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ չկատարելու դեպքում գործում են Հանձնաժողովի կողմից հաստատված պայմանագրի նոր օրինակելի ձևի դրույթները կամ գործող օրինակելի ձևում կատարված փոփոխությունները կամ լրացումները:
9.4 Սույն պայմանագիրը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**10. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը**

10.1 Հավելված - Առևտրային հաշվառքի սարքի, սահմանազատման կետի, առավելագույն թույլատրելի հզորության և էլեկտրամատակարարման սխեմայի հուսալիության մակարդակի վերաբերյալ (կազմվում է երկու օրինակից):

Մատակարար՝

գտնվելու վայրը Յր. Քոչարի փող. 13
Հ/h
Հեռախոս 26 91 49
Էլ. փոստի հասցեն
Ֆաքս Ֆաքս՝ 22 71 06
Գործունեության լիցենզիա N 0092
Ղեկավար Կ. Մնացականյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Սպառող՝

հասցեն
հեռախոս 093-610517
Էլ. փոստի հասցեն
անձնագրի տվյալները AK0673560 011 0912
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված
Էլեկտրական էներգիայի մատակարարման
(Մատակարար-Սպառող (բնակիչ) պայմանագրի

**Առևտրային հաշվառքի սարքի, սահմանազատման կետի, առավելագույն թույլատրելի հզորության և էլեկտրամատակարարման սխեմայի հուսալիության մակարդակի վերաբերյալ**

| Հաշվառքի սարքի տեղադրման վայրը | Առևտրային հաշվառքի սարք | | | | | | | | | | Սահմանազատման կետը | Առավելագույն թույլատրելի հզորություն /կՎտ/ | Էլեկտրամատակարարման սխեմայի հուսալիության մակարդակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվիչի | | | | Հոսանքի չափիչ տրանսֆորմատորի | | | Լարման չափիչ տրանսֆորմատորի | | | | | |
| | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | թույլատրելի հոսանքը (Ա) | անվանական լարումը (Վ) | հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| տ/Ք- | M200 | 5-60 | 220 | 2020 | | | | | | | տ/Ք | 10կվտ | 2 |
| Տն- 745/ | 07728442 | | | | | | | | | | Տն- 745/ | | |
| 07. ւ[illegible] | | | | | | | | | | | 07. ւ[illegible] | | |
| | | | | | | | | | | | | | |

1. Սույն աղյուսակի 6-12-րդ սյունակները չեն լրացվում 0.22 կՎ միաֆազ սպառողների համար:
2. Սույն աղյուսակի 13-րդ սյունակը լրացվում է համաձայն սպառողին տրված տեխնիկական պայմանների, իսկ դրանց բացակայության դեպքում՝
   1) 0.22 կՎ լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի և անվանական լարման արտադրյալով.
   2) 0.4 կՎ լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման և հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով.
   3) 6 (10) կՎ և բարձր լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման, հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի և լարման չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով:
3. Սույն աղյուսակի 14-րդ սյունակը լրացվում է՝
1) 1 թվանշանով, եթե սպառողի էլեկտրամատակարարումն իրականացվում է 6 (10) կՎ և բարձր լարման 1-ից ավելի առանձին օդային կամ մալուխային գծերով կայանի կամ ենթակայանի երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից,
2) 2 թվանշանով, եթե սպառողի էլեկտրամատակարարումն իրականացվում է այլ կերպ:

| Մատակարար՝ | Սպառող՝ |
|---|---|
| (անուն, ազգանուն, պաշտոն) | (անուն, ազգանուն) |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | |